ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 3

ՀՀՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-24/3 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով Թալինի ոռոգման համակարգի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի անհրամապատասխանությունների շտկման նիստի

ք. Երևան	29 փետրվարի 2024թ. ժամը. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Արսենյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
	Մ. Թումանյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

Ընդունել ի գիտություն՝

ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-24/3 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ , «Շին Քոնստրուկտ» և «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊ ընկերությունների www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշերի մասով պահանջվող փաստաթղթերը բացակայության մասին: Մասնակիցները չեն ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.2 Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ և «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտերում բացակայում են հրավերով պահանջվող «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշերի մասով պահանջվող փաստաթղթերը: «Շին Քոնստրուկտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ	79000	79000
2	«ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ	109000	109000
3	«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ	163020	163020

1.5 Հայտերի գնահատման մասին

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Գնահատող հանձնաժողովը որոշեց «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ , «Շին Քոնստրուկտ» ՍՊ և «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտերը գնահատել բավարար:

.5.1 Ոչ գնային պայմանները բավարարող որակավորման չափանիշների գնահատման մասին

Ոչ գնային պայմանները բավարարող որակավորման չափանիշները գնահատվել են հետևյալ կերպ.

Ոչ գնային չափանիշներ		Մասնակիցների անվանումը		
Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ	«ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ	«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ
մասնագիտական փորձառնություն	40	0	0	0
աշխատանքային ռեսուրսներ	30	0	0	30
Ընդամենը	70	0	0	30

1.5.2 Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով (համաձայն հրավերով սահմանված բանաձևի)

մասնակցի անվանումը		
«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ	«ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ	«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ
100	**72,48**	**48,47**

1.5.3 Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը (համաձայն հրավերով սահմանված բանաձևի)

մասնակցի անվանումը		
«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ	«ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ	«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ
70	**50,73**	**54,93**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.6 Ընտրված և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. *Ընտրված մասնակից ճանաչել՝*

ա/ ընտրված մասնակից ճանաչել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ -ին, որպես բավարար գնահատված և նվազագույն գին առաջարկած մասնակից:

բ/ այդպիսին չճանաչված մասնակիցներն են՝ «ԲՈՒԼԳԱՐՈ» և «Շին Քոնստրուկտ» ՍՊ ընկերությունները:

2. Սույն ընթացակարգի նկատմամբ կիրառվում է անգործության ժամկետ 10 օրացուցային օր:
3. Անգործության ժամկետն ավարտվելուց հետո ընտրված մասնակցին ներակայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

1.7 ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-24/3 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու (կամ չկնքվելու) հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Ա. Արսենյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Ա. Գևորգյան

_____ Մ. Թումանյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան